

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՄՍԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի հեռակա բաժնի 3-րդ կուրսի ուսանող
ՀՏԴ 398 (= 19)

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ
ՄԻ ՊԱՏԱՌԻԿ**

Բանալի բառեր և արտահայտություններ. Ալթայի երկրամաս, Մանիկ տատ, Լեռնակերտ, աքսոր, Ստալին, Բերիա, Սոլժենիցին, դաշնակցական, 1949 թիվ:

Ключевые слова и выражения: Алтайский край, бабушка Маник, Лернакерт, ссылка, Сталин, Берия, Солженицин, дашнак, 1949 год.

Key words and expressions: Altai region, Grandmother Manik, Lernakert, exile, Stalin, Beria, Solzhenitsin, dashnaksakan, 1949.

Բանասիրական ֆակուլտետի հեռակա ուսուցման բաժնի III կուրսի ուսանողուհի Հասմիկ Հակոբյանը հայ ժողովրդական բանահյուսություն առարկայի հետ կապված գրառել է ժամանակակից բանահյուսական նմուշներ, որոնց մեջ ուշադրությունս գրավեց Շիրակի մարզի Լեռնակերտ գյուղի բնակիչ Մանիկ տատի պատմածը՝ իրենց ընտանիքին Ալթայի երկրամաս աքսորելու վերաբերյալ: 1949 թվականին Ստալինի հրամանով բավական թվով հայեր, բոլորովին անմեղ լինելով, ընտանիքներով աքսորվեցին Ալթայի երկրամաս: Այդ աղետալի աքսորից բաժին հասավ նաև արտերկրից Հայաստան ներգաղթած որոշ հայ ընտանիքների: Օրինակ՝ գրականագետ Համբարձում Քենդերյանը, որը հիանալի տիրապետում էր ռուսերենին, մինչդեռ հայերեն խոսելիս զգացվում էր նրա՝ արևմտահայի արտասանությունը, կատակով ասում էր, թե թող ոչ ոք չգարմանա, իրենց ընտանիքը Հայաստան է վերադարձել՝ Ալթայի երկրամասում տասը տարի կանգ առնելով, որի համար էլ գնացել է ռուսական դպրոց: Ահա Մանիկ տատի բանահյուսական ոճով ներկայացված պատումն ունի ճանաչողական մեծ արժեք: Այն նաև հետաքրքիր է որոշ բարբառներ մեր օրերում ընկալելու առումով և օգտակար է բարբառագետների համար:

Ինչպես պարզ է դառնում Մանիկ տատի պատմածից՝ իրենց ընտանիքը համարվել է դաշնակցականների ընտանիք, սակայն հայրը

անգրագետ է եղել, և ռուս գնդապետը, որը տարիներ անց նրանց է տվել Հայաստան վերադառնալու թուղթը ստորագրելու, տեսնելով հոր անգրագետ լինելը՝ զարմացել է, թե վերջինս ըստ օրենքի, չպետք է արտրվեր: 1949-ի հայերի անհեթեթ արտրի մասին վկայություն ունի նաև Ալեքսանդր Սուժենիցինը՝ իր «Արխիպելագ Գուլագ» գրքում:

Մանիկ տատը նաև նշում է, թե ռուս զինվորականը նշել է, թե Հայաստանի Հանրապետությունը դեռ կա և անկարող էս այնտեղ վերադառնալ:

Կարծում եմ՝ բանահյուսական այս պատառիկը խոստուն ձևով ներկայացնում է, թե 1915-ի եղեռնից հետո էլ դեռ հայերին անակնկալ տառապանքներ սպասվել են:

ՄԱՆԻԿ ՏԱՏԻ ՊԱՏՄԱԾԸ

Մանիկ տատին ապրում է Շիրակի մարզի Լեռնակերտ գյուղում: Ծնվել է 1934թ.-ին: «Ես էստեղաց ծնունդ եմ. էստեղ ծնվեր եմ, էստեղ մեծըցեր եմ: Մեզի 49 թվին արտրին Ալթայսկի Կոայ, թե իբրև հերս դաշնակցական էր: Էկան, ըսին՝ համաձայն կառավարական որոշման ձեզի էս գյուղից կարտրենք: Գնացինք յոթը տարի մնացինք Ալթայսկի Կոայ: Կրվարինք, կրցանինք, ցորեն կրցանինք, գարի, կուկուռուզ, ամեն ինչ: Մեկ էտեղ, մեկ Կուրա ուժեղ ցանք էր: Լավ մալինա կեղեր, ճակնդեղ կրցանինք, շաքար կեղեր, կրքախնինք: Տարիմ ճակնդեղի ուժեղ բերք տվինք: Մեզի վարցատրություն տվին. մեր ագրոնոմին տվին մատացիկլետ, դիրեկտրին տվին շքանշան, մեզի ամեքուս հարուր հիցուն մանեթ փարա պարգևատրին ու պիսուկ, շաքար ստացանք: Յոթը տարուց հետո Բերիան ու Ստալինն օր մեռան, մինիստրություն մեզի Էկան ազատեցին: Ըսին՝ համաձայն կառավարական որոշման, ձեզի կազատենք, գուզեք գնացեք ձեր երկիրն ապրեք, չե՝ մնացեք Ալտայսկի կոայ, ձեր ռեսպուբլիկան կա, քանդուկ չե: Մենք էլանք ընտանիքով նորից Էկանք տուն: Բայց մարդիկ կային, օր Էկան, նորից գնացին: Յոթը տուն Սառնաղբյուրից էր, յոթը տուն՝ Արթիկից, իրեք տուն՝ Մարալիկից էր: Վերջում պակովնիկն բերեց հրամանն կարդաց, ըսեց հօրս՝ արի ստորագրա, իձի պադպիսիվայ: Հերս անգրագետ էր, ըսեց՝ էս չըկոնամ, էս գոամատնի չեմ, անգրագետ եմ: Էտի ըսեց՝ ախր ընկեր Լենին իրա ծրագրի մէջն գրեր ա, որ եթե մարդն անգրագետ ա, էտօր չըկըպին, բայց ձեր մօտ վայթե էտ օրենքն չըկիրառվե: Ըշտը, Էկանք գեղ, տուն սարքինք, նշանվանք, էս մկա իմ աղբօր տղին մըկա տըրվին մարգպետ. Դաշնակցական ա, Լեննական: Օր դաշնակցականներուն պաշտոն տվին, իրան տվին մարգպետ»:

Ա. Դոլուխանյան, Հ.Հակոբյան
Ժամանակակից հայ ժողովրդական բանահյուսության մի պատատիկ
Ամփոփում

Հրապարակումը ներկայացնում է Շիրակի մարզի Լեռնակերտ գյուղի բնակիչ Մանիկ տատի պատմածը՝ իրենց ընտանիքը 1949 թվականին Ալթայի երկրամաս արքայազնի վերաբերյալ:

Պատումն ունի ճանաչողական, բանահյուսական և բարբառագիտական արժեք:

А. Долуханян, А. Акопян
Маленький отрывок из современного армянского фольклора.

Резюме

Публикация представляет сказ бабушки Маник из села Лернакерт Ширакской области, семья которой в 1949 году была сослана Алтайский край.

Сказ имеет познавательную, фольклорную и диалектологическую ценность.

A.Dolukhanyan, H.Hakobyan
Fragment from modern Armenian folklore

Summary

The current article deals with Grandmother Manik's narration - a resident of the village Lernakert of Shirak region, Gyumri, whose family was sent to exile in Altai region in 1949.

The narration is of cognitive, folklore and dialectical value.